

թուլթը պատռել:

Սակայն Լեւոնի գրածը կարգաւորվում է տեւանելով որ տաճկերէնը լաւ չէ գրուած, կատակով! տաճկական լեզուի մէջ միմիայն իր հմտութիւնը ցոյց տալ: նպատակով, խմբագրում է երկրորդ նամակը:

Յետոյ, ճաշի գնացած միջոցին, կրկին Լեւոնին պատուիրում է երթալ թղթերը պատռել:

Լեւոնը իսկոյն տուն է գնում, և վերադառնալով յայտարարում է որ երկու թուղթն էլ այրված են:

Պերեմն մատնիչութիւնը յղացված, բայց կատարված չէ: Վահան Շահրիման ապացուցանում է որ վարժուհին չէ եկած ամառկանի քիչ լինելու պատճառով և այդ հաստատելու համար մատնացոյց է անում Ֆիլիպէի թաղական խորհրդի արձանագրութիւնները:

Մենք մեր կողմից աւելացնում ենք որ Բ..... Մ.....

..... կինը միշտ վտանգված էր և կասկածի տակ: Մ.....

Ղեռն Շահրիմանի Վառնա եղած միջոցին, Վարդօն խնդրում էր Մակեդոնական կոմիտէի միջոցով իր կնոջը, որ սարսափելի հակողութեան տակ էր Պոլսում, Պոլսից փախցնել և Վարդօն Սօֆիայի Մակեդոնական կոմիտէի հետ մի քանի անգամ բանակցութիւն ունեցաւ այդ մասին և կարող է հաստատել:

Սեյր կախը յայտնի է «Ֆէմինիզմ» անունով:

Արական սեռէն ամենայայտնի ընկերաբաններ իրենց զօրութիւնը անուշաբան են արդէն իգական սեռին պատկանող համանման ընկերաբաններու, որոնք, տուանց ըմբոստացումի, կանացի այդ ընկերութեանց պարագլուխ դարձած, գրծչակ կը բանան և կ'առաջնորդեն կինը հասցնելու և դնելու այն բարձրութեան վրայ, որ երկու սեռերու «հասարակութեան» դաւանանքը կը կազմէ: — «Իգական սեռի արուեստակեալ ճակատագիրը բարեփոխել անոր բնութարարած իրաւունքները իրովին իրեն տալ, և կին էական հասարակութեան կանգնեցնել այն պատուանդանին վրայ, ուր կանգնած է իր ընկերը՝ այլը»:

Ազնիւ սկզբունքներու վրայ հիմնուած այդ արդար կախը օրէօր ընդարձակ ծաւալ կը գտնէ. աշխարհի ամեն կողմերը կանանց համագումար ժողովներ, միջիններ կը կազմակերպուին, իրարու հետ սերտ առնչութիւն ունեցող գործակալութիւններ կը հաստատուին, և յարգելի յամառութեամբ առաջ կը մղուի այդ սրբազան դատարարութիւնը: Անտարակուսելի և անխուսափելի է կիննք ըսել, թէ օր մը վերջապէս կնոջ ըզր իրաւունքները իր մարդ ընկերէն պիտի ճանչցուին ու յարգուին, և կինը իր այդ լծակցի կողքին պիտի կանգնի իբր անոր համահասարակութեամբ, և ոչ ստրուկը: Բնութեան կարգերը, բարոյականութեան յայտնի ու բարձր սկզբունքները այդպէս կանխասահմանած են երկու սեռերուն համար այ՝ «հասարակութիւն»:

Հայ կնոջ յայտնի անպատրաստակալութիւնը սակայն զուրկ ու անմասն

Իսկ յղանալու մէջ ո՞վ աւելի յանցաւոր է, այդ Շահրիմանը և Սարգսեանը իրենք իրենց մէջ կարող են զտել, ի հարկէ չէզոք մարդկանց ներկայութեամբ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՐՏԵՄԻՍ

(Նոր անասնակերպ)

Կանանց ընդհանուր շարժումը վաղուց սկսած և ընդունուած է արդէն ըզր լուսաւորեալ աշխարհներու մէջ: Եւրոպացի կանանց բազմաթիւ ընկերութիւններ, առանց խտրութեան դաւանանքի, հայրենիքի, ազգակցական կապերու, իրարու ձեռք կը կարկառեն և տաք ու կարմիր թերթով մը կապուած, կը կազմակերպուին ու կը ձաւլուին իրար հետ մի ընդհանուր ուղղութեան պատկանող լայն ծրագրով, կոուելու և ձեռք ձգելու համար իրենց այն իրաւունքները, որ նախնական դարերէ ի վեր սկսած արական սեռը կապուած կը վերապահէ իրեն, և զեռ կը յամար չը յատկացնել իր «կին ընկերին»:

Ինչու ու յամար սկսուած այդ կախը այսօր յայտնի ու սուր կերպարանք ստացած է արդէն և բնական հրապարակին վրայ, ու աղմկայող ցոյցերով լայն ծաւալ կը գտնէ զբազանց ներքին բովանդակ լուսաւորեալ աշխարհի ուղիքը:

Այդ կախը յայտնի է «Ֆէմինիզմ» անունով:

Արական սեռէն ամենայայտնի ընկերաբաններ իրենց զօրութիւնը անուշաբան են արդէն իգական սեռին պատկանող համանման ընկերաբաններու, որոնք, տուանց ըմբոստացումի, կանացի այդ ընկերութեանց պարագլուխ դարձած, գրծչակ կը բանան և կ'առաջնորդեն կինը հասցնելու և դնելու այն բարձրութեան վրայ, որ երկու սեռերու «հասարակութեան» դաւանանքը կը կազմէ: — «Իգական սեռի արուեստակեալ ճակատագիրը բարեփոխել անոր բնութարարած իրաւունքները իրովին իրեն տալ, և կին էական հասարակութեան կանգնեցնել այն պատուանդանին վրայ, ուր կանգնած է իր ընկերը՝ այլը»:

Ազնիւ սկզբունքներու վրայ հիմնուած այդ արդար կախը օրէօր ընդարձակ ծաւալ կը գտնէ. աշխարհի ամեն կողմերը կանանց համագումար ժողովներ, միջիններ կը կազմակերպուին, իրարու հետ սերտ առնչութիւն ունեցող գործակալութիւններ կը հաստատուին, և յարգելի յամառութեամբ առաջ կը մղուի այդ սրբազան դատարարութիւնը: Անտարակուսելի և անխուսափելի է կիննք ըսել, թէ օր մը վերջապէս կնոջ ըզր իրաւունքները իր մարդ ընկերէն պիտի ճանչցուին ու յարգուին, և կինը իր այդ լծակցի կողքին պիտի կանգնի իբր անոր համահասարակութեամբ, և ոչ ստրուկը: Բնութեան կարգերը, բարոյականութեան յայտնի ու բարձր սկզբունքները այդպէս կանխասահմանած են երկու սեռերուն համար այ՝ «հասարակութիւն»:

Հայ կնոջ յայտնի անպատրաստակալութիւնը սակայն զուրկ ու անմասն

թողուցած է իրեն այդ կանացի ընդհանուր շարժումներուն մասնակցել և սրովհետեւ առնայ ինքնազիտակցութեան չիայ բացարձակ ազատութիւն, նա է՝ և պիտի մնայ միշտ իրաւակորոյս, միշտ խաղալիք, միշտ «ստրուկ»:

Հայ իգական սեռին յատուկ ազատ ու անկախ թերթ մ'ունենալու շնորհուող պահանջը երբէք աւելի զգալի դարձած է քան այժմ, քանի որ նա կը գտնուի ամենավտանգաւոր շրջանի մը մէջ, նորագոյն սերունդը իր անգիտակից հետեւողասիրութեամբ կըրոնայ անդառնալի կերպով գլխը ու գայթակղիլ այն «նորոյթներուն» մէջ, որուն նա սկսած է փարիլ հոգւով ու սրտով: Հայ կինը օտարամուտ վարք ու բարքերու մէջ մոլորած ու շուարած սկսեր է արդէն այլասեռուիլ: Բայ մեւ, և ահա կորուսած է նա: Աւելորդ, կանխահաս և անմարտելի ձեռնարկ մը պիտի լինէր մեզ համար, եթէ փորձէինք ընդգրկել «Ֆէմինիզմ» իր ամբողջ ծրագրով և ուղղութեամբ, ու զայն տարածել ջանալինք մերայնոց մէջ, Բայ այն, մեր երկրի միջավայրն ու շրջապատող համագամանքները, առհասարակ անսովոր յատկութիւնները, մեր ընտանեկան կազմակերպութեան կնոջական բարքերու ինքնուրոյնութիւնները, ժամանակի ոգին, և զեռ շատ ու շատ յարգելի պատճառներ, մեզ կը պարտաւորեն, որ մենք հայ կանայքս չը լինինք իրովին անձնատար բացարձակ շարժումներուն ֆէմինիզմին այլ սլակեք մեր սեպհական բարքերը: Եւ զայնքան որ անպատրաստութեամբ մեր տոհմիկ և ընդարոյս բարեմասնունութիւններուն վրայ անոնց առաւելութիւնները և գործերը անոնցմէ բացարձակապէս անկախ ուղղութեամբ:

Արական սեռէն ամենայայտնի ընկերաբաններ իրենց զօրութիւնը անուշաբան են արդէն իգական սեռին պատկանող համանման ընկերաբաններու, որոնք, տուանց ըմբոստացումի, կանացի այդ ընկերութեանց պարագլուխ դարձած, գրծչակ կը բանան և կ'առաջնորդեն կինը հասցնելու և դնելու այն բարձրութեան վրայ, որ երկու սեռերու «հասարակութեան» դաւանանքը կը կազմէ: — «Իգական սեռի արուեստակեալ ճակատագիրը բարեփոխել անոր բնութարարած իրաւունքները իրովին իրեն տալ, և կին էական հասարակութեան կանգնեցնել այն պատուանդանին վրայ, ուր կանգնած է իր ընկերը՝ այլը»:

ԱՐՏԵՄԻՍը պիտի ընթանայ շատ պարզ ու համեստ ծրագրով մը: Մասնաւորապէս նիւթ պիտի ընտրէ իրեն ընտանեկան բոլոր երեւոյթները, նըկատի ունենալով անոր զարգացման պատմութիւնը ու կնոջ հոգեբանութիւնը: պիտի խօսի առական և իգական սեռերու իրար դէմ ունեցած փոխադարձ իրաւունքներուն և պարտականութեանց վրայ, պիտի մասնանշիլ ընէ անոնց թերութիւնները, կանգ պիտի առնէ մասնաւոր և ընդհանուր երեւոյթներու վրայ, որոնք հանրային բնութարարութիւն կը կրեն: մասնակներու կրթութեան, չափահասներու դաստիարակութեան և հասակաւորներու ունենալիք դերերուն վրայ պիտի խօսի ամբողջ գլուխներով: Ի նկատի պիտի ունենայ իգական սեռի տան մէջ, և տնէն դուրս առական սեռի գործակալութեան, աշխատանքներու և անոնցմէ առաջ եկած չարքներու և բարեքներու տեսակները: Պիտի հետաքրքրուի լուսաւորեալ կիբրոններու մէջ ունեցած իգական սեռի առօրեայ գործերով: լայն բաժին մը պիտի յատկացնէ մանաւանդ զգաւաւոր հայ կնոջ: կեանքին անոր բարքերուն, սովորութիւններուն մասնակարարելով վէպիկներու և պատկերներու ձեւով շահադրող նիւթեր: ԱՐՏԵՄԻՍը պիտի ունենայ և գրական ամեն սեռի արտագրութիւններ: գեղարուեստական գրականութիւն, արձակ և չափաւոր գրութիւններ, կարեւոր թարգմանութիւններ, քննադատական և գրաքննական բաժին և այլն: ԱՐՏԵՄԻՍը պիտի սեւեհայ «Արանց թափներ» խորագրով կ'ըսէ: աւելի նախապատուութիւն պիտի տայ իգական

սեռի գրիչներուն կամ անոնց համար շահեկան եղող յօդուած ու թղթակցութիւններուն:

ԱՐՏԵՄԻՍը կունենայ ազգաբարու թիւններու առանցին բաժանմունք:

Եթէ հանդէսի միջոցները ներքին հեռագիտէ պիտի տայ և լուսատիպ պատկերները այն դէպքերուն որոնք հայ հասարակութեան իգական սեռի մէջ կուգան կարեւոր դերեր կատարելու կոչումով:

ԱՐՏԵՄԻՍին աշխատակցելու համար արդէն պատրաստակամութիւն և նյայտնած ազգային երկսեռ յայտնի գրողներ:

ԱՐՏԵՄԻՍը հրապարակ կըլելով պիտի փնտռէ գտնէ, և գուցէ ծնունդ տայ իգական սեռի նորագոյն գրողներու, նրոնք ասպարէզի նեղութեան պատճառաւ գուցէ մինչև օրս թագուն մնացած կարողութիւններ և ու կըզգան իրենց մէջ սէր դէպի գրական կոչումը, բայց զանազան նկատուածներով կը մնան անմասն լրագրութեանց մէջ երեւնալէն, և կը խաբին ու կը թառամին:

Կը յուսանք թէ մեր հայ տիկիներն ու օրիորդները իրենց թերթը պիտի սիրեն և ԱՐՏԵՄԻՍի էջերուն մէջ ցոյց պիտի տան թէ իրենք ալ ունին իրենց սեռին արժանավայել նախանձանդութիւն, կամք, ոյժ և կարողութիւն իրենց ինքնատ սկսուած ձեռնարկ մը պաշտպանելու, յառաջ մղելու, բարձրացնելու և ցոյց տալու թէ հայ կինը բոլորովին ակար, տեսնելու, մտածելու և գործելու անընդունակ մը չէ:

Այն ատեն ԱՐՏԵՄԻՍ արդէն իր գեր կատարած կըլլայ:

Գահիրէ ԽՄԲ. Արտեմիս:

ՆԱՄՈՎ ՏԱՐՏԱՆԵԼԷՆ

Ամսոյս 8/26ի երեկոյին ուրբաթ օրը քաղաքիս Հիւսիսային կողմն գտնուող Միտիլի կղզին վեց զրահարոններէ բաղկացող Ֆրանսական նատտրմէ մը յանկարծ կը պաշարուի, Միտիլիէի կառավարիչն ծովակալին կերթայ բարի գալուստ մաղթելու, բայց Ֆրանսական ծովակալը չընդունիր և իսկոյն 500ի շափ զօրք դուրս կը հանէ բերթերը, կառավարութիւնը և մաքուր մտնելով պաշտօնեաները կը վաճառէ և օսմանան կառավարութեան լաթը ի յեցնելով Ֆրանսական դրօշը կը պարզէ:

Նեղուցի հրամանատարը խիտտ ու շայրութեամբ նեղուցը կը պաշտպանէ, Երանի թէ Միտիլիին փառքն Աստուած օր մը առաջ մեզի ալ ցուցուներ, այս յանկարծակի գրաւումն տաճկաց ապաշխարութիւն և մեզի ալ ուրախութիւն պատճառեց:

Տառուր Հայաստանին:

Տարածանէլ 9/27 Նոյ.

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ
ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒՆ



Ձեզի կը հարցնեմ. նոր քարոզողներ մի՞թէ կը կարծէք որ միւս տաճկի ստրուկ հպատակ ազգերը, տրնտեալական եւ մտաւորական զարգացման հասան կատարելագոյն եւ անկից յետոյ յեղափոխուեցան: Ոչ երբէք. տաճկի բարբարոս եւ վայրենի անբութեան ի գործ դրած դարեւոր հայտնաբերութեանց չի կրնալով զիմանալ իրենց աղէտ խեղճ ազգէն վարժապետ, սարկաւազ, հովիւ եւ արհեստաւոր, յառաջ նեւտեցան եւ կազմեցին յեղափոխական կոմիթէներ, ամբողջ 30—40 տարիներ անընդհատ գործեցին. խումբեր կազմեցին. հարստահարեալին օգնութեան հասան, եւ բազում անգամներ տաճկի զօրաց հետ ընդհարումներ ունեցան, մտան, կրկին կանգնեցան, և շարունակեցին սկսուած գործը. իրենց ազգին քաղաքագործութիւն որովցեցին. օրինակելի գործերով գործնական յեղափոխութեան վարժեցուցին, երկարատե փոքր եւ մեծ կուրսերով, մեծամեծ գոհորով իրեններով, իրենց զինեալ բողոքի անարկու ձայնը երրոպական մեծ պետութեանց հասուցին: Վերջի վերջոյ Մարտի 29 զիւնիստիստութիւնը ըմբռնեց լոյսօտաներուն եւ քարթիստներուն հրամանատարութեամբ կուռղ քաջ հայրենասէրներուն յարուցած կուռղ արդարութիւնը եւ իրաւունք տուաւ նոցա. միւս կողմէ ձանձրանալով ճարահատեալ կամայակամայ ախարհի խաղաղութիւնը վերջովոյ այդ ըմբռնող, զէնքով խօսող յանդուգն յեղափոխականաց զիջանիլ ստիպուեցաւ եւ ազատ հռչակեց անոնց հնչրենիքը:

Ազատեալ այդ ազգերը, ինչպէս զուրք ալ պիտէք կարծեմ Սերպիա, Ռումանիա, Յունաստան, Սաւոս, Լիբանան, Չեռնա-կոսա, Պուլկարիա եւ կրիսէ են. կարգը եկաւ մեզ. թէ՛ եւ դժբաղդաբար ուչ զարթեցանք, բայց ուրախալի է որ զարթեցանք. սկսուած կուրս, պէտք է շարունակել. աւելի իմաստուն փորձառու կերպով, միաբանութեամբ եւ կազմաւորել մեր ուժերը աւելի կազմաւորած կուռիլ, միշտ կուռիլ. Այո մեր նշանաբանը հաւատարմքը պէտք է ըլլայ, այսօր և վաղը եւ յաւիտեան կուռիլ. Երկու մարտի 29 ըմբռնութիւնը եւ շընութիւնը. մինչեւ վիճակուի մեզ հայոց՝ ազատ ապրիլ, մեր նուիրական Հայաստանի հողին վրայ:

Եւ թող կոտորի այն դրիչը, դադարի եւ լռէ այն մարդը, այն լեզուն որ հայոց բարեկեցութեան գարմանը ուրիշ բաներու մէջ կը փնտռէ, անտեսելով հինգ դարերու հայոց գերութիւնը, տառապանքը լացն ու կոծը եւ դեռ նոյն թշնամի ձեռքով երկկուան քանի մը հարիւր հազար լազազ հանդուրտ գիւղացուց ու քաղաքացուց անխնայ ջարդուիլը:

Վրէժ, վրէժ ինչպէս թիւն զէն ի ձեռին, Ակն ընդ ալան, աստի՛մ ընդ աստման, այս է միակ ելքը հայութեան կործանութեան ազատելուն եւ հայրենիքի ազատելուն:

Հո՛ն հանդարտութիւն, խաղաղութիւն քարոզողներ, հո՛ն Հայաստանի մէջ վաղուց շատ վաղուց տաճկի Սուլթաններու տիրապետութեան տակ երբ դեռ ոչ հայոց մաքրին մէջ գոյս-

թիւն ունէր զէնք գործածել, եւ ոչ ալ զիմարել. եւ ոչ ալ յեղափոխական կազմակերպութիւններ կար, ինչո՞ւ կը սրբապղծուէր այն ամենը ինչ որ հայոց նուիրական էր: Նոյն թիւնամին է եւ այսօր հայը կոտորուող, բնաջնջողը. ինչի նա հանդարտ խմբագիր, աստուածամախ քահանայ, վարժապետ, եպիսկոպոս տիրացու. կամ վարժապետ եւ կամ պարզ խեղճ գիւղացի կը բաւէ որ հայ է: Թշնամին պիտէ իր ստակած պայտրուէն աւանդութիւնները, եւ կը շարունակէ նոյն շաղթով ընթանալ:

Քարոզիչներ, զուրք մի անգամ կարգացի՞ք սպազորել առաջ ձեր ձեռագրիները. պուլկարի ազատութիւնը ժամանակին պաշտօնական եւրոպայի կամքն է եղեր հօ. . . սրխալէ. պուլկարը աննդհատ երկար, շատ երկար տարիներ հերոսային կուռիներէ և երկիրն արիւնջուայ լի. նել վերջն էր միայն. որ Երոպա ճարը կարած ինչիցը ձեռք առաւ, և սուսի պատերազմը տեղի ունեցաւ:

Դո՛ւք Ամերիկայի, Ալմանրոյ և այլ մեծ ազգաց յառաջգիտութիւնները կակնարկէք, օրինակ կը բերէք. որ միայն կրնայ ըլլալ որ հաւատայ, և ելլայ բազմապատ թիւն մը դէն մեր եւ անոնց անտեսական, մտաւոր զարգացման եւ երկրի հանդամանաց միջեւ: Դուք անփորձ, բայց ինչպիսիք ժողովրդական կոչող պարոններ, լսեցէք. անկարելի է որ ազգ մը իւր կորուսեալ ազատութիւնը միմիայն դաստիարակութեամբ եւ անտեսական զարգացմամբ ձեռք բերէ. արդէն այդպիսի մտածմանց վաղուց ժամանակը անցեր է: Ձեզ կը հարցնեմ, տաճկի սիրպետութեան բռնութեան ներքեւ զարգացածք, յառաջգիտեցի՞նք, որ մը ազատ չունչ առի՞նք. զորոցեցէք, սրպէսզի այսուհետեւ ալ նոյն բնութեամբ ունենայինք:

Լաւ գիտէք վերոյիշեալ ազատեալ ազգաց ստրկութեան եւ յեղափոխութեան պատմութիւնները: Իրաւ է թէ՛ միշտ զէնքով կուռղ մարդիկ փոքրամասն են եղած, բայց եւ այնպէս իրենց հաստատութիւն եւ յարատեւ աշխատութեամբ, անվեհեր մաքրութեամբով ազգին մեծամասնութիւնն ալ կամայակամայ համակիր եղած է, բարոյապէս կամ նիւթապէս օգնած է:

Իրեցէ երբեմն անհաշիւ եւ անխորհուրդ գործեր ալ կատարուեցան մեր յեղափոխութեան տասնամեայ շրջանին մէջ, այդ ինքիք մասամբ ներելի է. եւ ծանրամանր մեղադրանքներ ընելը ուղիղ չէ. անոր համար՝ սր մեր յեղափոխականները իրենց հայերէն ուրիշ բան չէին սորված՝ բայց եթէ ստրկութեամբ ճիտ ծռել տաճկի ամէն սնարգանքի զիմաց, լռել ու համբերել: Ուրեմն այսպիսի անփորձ ազգի մը զաւակներուն, ժամանակը պիտի սրվեցնէր յեղափոխութեան գործունէութեան: Ընչ մեզ նման եղած են ժամանակին մեզ վիճակակից ստրուկ ազգաց գործերն ալ:

Այո, հայր ոչ միայն այսօր, այլ հինգ դարէ որ գիտէ, թէ տաճկի ազգային ոյժը բաւական զօրաւոր է. եւ արդէն այդ կարեւոր կէտը լաւ ըմբռնած են ներկայ յեղափոխութեան պետերը. . . բայց եւ այնպէս պէտք է կուռիլ նորանոր ոյժերով ազատութեան համար: Մեզ նման անհաւասար էր պայքանեան փոքր ազգաց ոյժը տաճկի ոյժին դէմ:

բայց աննդհատ կուռելով ազատեցան:

Եւ այսօր կը զարմանամ որ ներկայ մահու կենաց ստակալի վայրկեաններու, անգին ազատ եւրոպայի մէջ չետզհետէ հաստատուող, ինքզինքնին ուսումնական անուանող այդ պարոնները, կեղծ են նոր նոր թերթեր հիմնելով, իրենց գլխուն փշած թեթեւամիտ զաղափարները յառաջ քշելով ժողովուրդին միայն կուռեն պղտորել հայոց ազգին մէջ տան տարիէ ի վեր գործող յեղափոխական կազմակերպութեանց դէմ: Եթէ այդ պարոնները գիտնային, ազգին ծառայութիւն մատուցանել, բանիւ եւ գործքով պիտի միանային ազգին ծոցէն ծնունդ առած յեղափոխականաց հետ գործելու, ոյժ տալով ալ աւելի զօրացնելու համար, այդ կազմակերպութիւնը:

Համոզուելու ենք որ, ներկայ ազգին աղետալի ժասուն, թշնամին՝ տաճկի աւազակ պետութիւնը, եւ նորա թեւ ու թիկունք եղած քուրտը, չէրքէզը, լազը, եւ այլն. անխնայ կը հալածեն եւ կը կոտորեն զմեզ, և ուխտած են մեր երկիրը զատարկացնել հայոցմէ, տեղը լեցնելով վայրենի հելուպակ խուժան ցեղերով:

Երբ այսպիսի տհաւոր վտանգի մը դէմ առ դէմ կը գտնուինք, ինքզինքնիս կարող ենք իրաւել, եւ ազգը վերստացական բաներով քնացնել: Այսչափս ալ հերիք համարելով, միայն վերջաբան կրեմ, փրկիսփայլութեամբ ազգը փրկող պարոններուն թէ՛ այժմ Հայք, ուրիշ բանի պէտք չունին, բայց եթէ հրացանի, վառուտի, գնդակի եւ սուրի:

ԱՊՏԱԿ

24/6 նոյեմբ. Աղէքսանտրիա

ՊԱՏԱՍԻԱՆ ՄԸ Տ. ԶԳՕՆԻՆ

—(00)—

Կարգացինք «Ճարժումի մէջ ձեր գրութիւնը, որով կը հրաւիրէիք հայ երիտասարդութիւնը յանձնախումբ մը կազմել և դատել Սարգիսեանը իր մատնութեան համար:

Իր հրապարակու խոստովանութիւնը բաւական չէ՞ր իրեն զլաւնալու այդ տեսակ շնորհ մը, ենթադրեմք թէ փոստան յանձնուած չըլլալուն նամակը ու է վտանգ չէ պատահած Պօլսոյ վերտանգում մարդուն. բայց քանի որ մտքերուն անցած են միմակ եւ կամ թէ ուրիշի մը հետ այդ խմբագրել:

Կը հարցնեմ Տ. Զգոնեան հայ ազգասէր եախասարգներու բունելիք ընթացքը ատոնց համար: Ձէ մենք չի պիտի զիջանինք այդպէս յոյսոյ նշոյլ ցոյց տալ մատնիչներու:

Մենք պիտի տշխատինք մեր դատակարարի բարոյականը շապականել:

Որովհետեւ համոզուած ենք որ տեսակ մը քաջալերութիւն պիտի ըլլայ այդ տեսակ ցածութիւններու ընդունակ եղողներու համար ալ յանձնախումբ կազմելը:

ուստի չենք խնայեր և միշտ անխղճօրէն կը վերաբերուինք դէպի մատնիչները, թրքացող դրամաշորթները և կը թրքենք հալար անգամ, մանաւանդ որ յեղափոխականներ և խմբագիրներ են ատոնք:

Յ. ԽԱՉԻԿԵԱՆ

ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒ ԵՒ ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ի նպատակ երկուսն որքանամիտ հոգւ. 25 ի երեկոյան տրուած երեկոյթի հաշուեցուցակ:

ՄՈՒՏՔ ՀԱՍՈՅԹ

Արծաթ լէվ. Սնթ.

Մատուած ընդհ. տոմ.	
սակներէ	874. —
Մաղկէ փնջերէ	54. 15
Սիկարէթէ	44. 95
Նուիրատուներէ	10. —
Ապարիկ փացած	17. —
	967. 10

ԵԼԻ ԾԱԽՍ

Մաղիկի եւ սիկարէթ	7. 20
Քարիւղ, մոմ եւ զամ	14. 50
Որքերու պատկերներու շրջանակ, շղարչ, երիզ	4. 80
Թուղթ, անվլոփ. դրոշմաթուղթ եւ այլն	— 75
Լապտերի, նստարաններու վարձք եւ փոխադ.	8. 10
Դերասանական ու երգեցիկ խումբի հիւրասիրութիւն	12. 50
Նուագածուներուն	25. —
Բեմական ծախս	6. —
Սպասարներուն	9. 30
Տպագրական ծախս պուլկար տպարանին	7. —
զուտ հասոյթը	874. 75

Իսկ թղթի եւ հայերենի համար եղած 5 Քր. ծախս Տ. Գուրպէթեան ընկ. նուիրեց:

Գործ. ժողովս շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնը: Վէճի մը եւ հաշտութեան առթիւ պարոն Պօղոս Մանուկեանէ 10 (տաս) Քրանք պ. Ռուբէն Գազանեանէ եւ պ. Յարութիւն Սաչիկեանէ մէկ մէկ Քրանք եւ պ. Պօղոս Մարտիրոսեանէ եւ պ. Նիկողիմոս Տ. Սարգիսեանէ 50ական սանթիմ:

Մնամ յարգանքք

Ի գիմաց Գործ ժողովոյ Ատենադպիր վասն Ատենապետի Յ. Կ. Ճանկիւրեան Ս. Մարինեան Գանձապետ Խ. Աղնաւորեան

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

—0—

Յ. Խաչիկեան. — Իրաւունքի ուղղուած ձեր երկրորդ նամակը սուսայժ չենք տպագրի: Գուրպէթեան ինքը իր վերջին գրութեամբ արդէն ամեն բան ապացուցանում է: Բացի նրանից մենք ուրիշ աւելի կարեւոր վերականգնող եւ նուիրող են նոյնիսկ գատարանի առջեւ ապացուցանել ձեր նախկին մեղադրանքը:

Այսուհետեւ մենք Իրաւունքի խմբագրից վերցնելու ենք նրա

բոլոր նախկին տրապիստները և գործենք ամենուր «Յ. Շէֆկիյո» մի անուն որ Գուրպէթեան ինքնակամ կերպով է ընդունել և կատարելապէս արժանի է այդ անունին :

Բէֆիկ պէյ Գուրպէթեան—Յ. Շէֆկի բրբէք կաշառել չէ ուղած , այլ Հուգուգի գրաշարին :

Գուրպէթեան—Շէֆկի գեռ մօտ տնցեալներս ամերիկացիներին առաջարկեց երկու հարիւր բաժանորդ տալ , որ թուրքերէնը իր լրագրից հանէ : Շատ հաւանական է կարծել որ եթէ չորս հարիւր բաժանորդ տան եւ թուրքերէն պահանջեն , նա ամբողջ լրագիրը թուրքերէն կը դարձնէ :

ԽՄԲ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կովկասի մամուլի մէջ հարց է բարձրացեր Միբայել նալպանտեանի յիշատակին ևս արձան կանգնեցնել :

— Գահիրէի մէջ Օր. Մարի Պէյլէրեանի անօրէնութեամբ և խմբագրութեամբ «Արտէմիս» անունով ամսագիր մը պիտի հրատարակուի : Ամսագրին նպատակն է՝ հայ կանանց բարոյական և մտաւոր բարձրացումը մեր ընկերային կեանքի մէջ :

Գատարեալ լրջութիւն և յաջողութիւն կը ցանկանք :

— Ֆիլիպէի հայ երիտասարներէ կազմուած երգեցիկ խումբը ձայնագրած հայկական երգեր պիտի հրատարակէ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Մեծ վէշերի պաշտօնը յանձնուած է Սաիտ փաշային :

— Սուլթանը կը պատրաստուի Միւնիք պէյը կրկին Բարեզ զբոսկել :

Բարեզէն կը հեռագրեն որ Ֆրանսական կառավարութիւնը մեղծած է Միւնիք պէյը ընդունել , որովհետեւ վերջինս աշխատած է Պոլսոյ Ֆրանսական դեսպանատան գործակատար Բապարթը կաշառել :

— Թուրք կառավարութիւնը լիովին բաւարարութեան տուած է նաև Աւստրիական կառավարութեան :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Հարաւային Ամերիկայէն կը հաղորդեն որ աներևութացած

պօէր զօրավար Տուէտ կրկին երեւան եկեր է , Օրանթի արեւելեան կողմէն : Անգլիական թերթերը Տուէտը մեռած հռչակեցին : Քիչէն զօրք զրկած է Տուէտի դէմ :

— Թրանսվալի Եւրոպայի գործակատար Լէյտս Պէրլինէն Վիէննա անցեր է կոմս Կլախօվսքիին հետ խորհրդակցելու համար :

— «Պայմա՞ կըսէ որ պօէրները զուր կը մտածեն որ Անգլիա ու է միջամտութիւն մը պիտի ընդունին :

— Գարի մէջ ապստամբութիւնը անգլիական կառավարութեան հետզհետէ մեծ ծաւալ կ'ստանայ :

Թ Ո Ւ Ս Ս

Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ կրկին Չարի դէմ գաւազարութիւն է կազմուած եղեր :

Սբալա—Սքէրնէվիչ երկաթուղային թուղակներէն Նիւրնբըրգի քով ական և տինամիս գտնուեր է :

Բազմաթիւ ձերբախուցութիւններ տեղի ունեցեր են : Չերբակալուածներու մէջ կը գտնուի շատ մը գործաւորներ , երկաթուղիի ծառայողներ , ուսանողներ և կիներ : Չերբակալուածները Վարսովիա տարուած են :

Ա Ն Գ Լ Ի Ս

Լօրտ Ռոզպէրի իր մէկ ճառին մէջ յայտարարեր է որ կառավարութիւնը թոյլ է և յոգնած : պէտք է վայն փոխել :

— Չընայելով որ կառավարութեան ներկայացուցիչները իրենց ճառերուն մէջ լաւատեսօրէն կը վերաբերին գէպի Թրանսվալի պատերազմը , սակայն ժողովրդեան դժգոհութիւնը հետզհետէ կը սաստկանայ այդ տաղակալի և մեծ զննանք պատճառով պատերազմին պատճառ եղողներուն հանդէպ :

Յ Ր Ա Ն Ս Ս

Քանի մը թերթեր և գրագէտներ իրենց դժգոհութիւնը կը յայտնեն Ֆրանսական կառավարութեան որ ան առանց հայկական ինդիին վրայ լուրջ ուշադրութիւն գարձնելու նաւատորմի զեղծ ետ քաշեց Թուրքիոյ ջուրերէն :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Ազգային կուսակցութեան պետին երեսփոխանակ , ժողովի նախագահութեան հրաժարելէն վե

ջը , ազգայինները , որ անցեալ ժողովին մէջ կառավարութեան կուսակց էին , ընդդիմադիրներուն կողմը անցած են :

— Սօֆիայի մէջ ոկսուեր է ալպաներէն թերթ մը հրատարակուիլ :

— Մակեդոնական կազմակերպութեան երկուսի բաժանումը անխուսափելի կերեւի : Պուլկար թերթերը կը հաղորդեն որ Սօֆիայի տեղական կոմիթէն արդէն երկու մասի բաժնուած է :

Յ Ա Յ Տ Ա Ս Ս Ր Ս Ս Ի Ի Ն

Ֆիլիպէի «Հայկական երգեցիկ խումբը» աս շրջանին մէջ վերսկսած ըլլալով արդէն իր պարտականքները , ձեռնարկած է նաև պարբերաբար հրատարակելու Եւրոպական ձայնագրութեամբ հայկական հին եւ նոր քառաձայն երգեր , մաքուր թղթի վրայ , յստակ վիճագիր :

Այո առթիւ երգեցիկ խումբի վարչութիւնը նորկայիս կը յայտնէ Պուլկարիոյ և արտասահմանի երաժշտասէր հայ երիտասարդութեան , որ եթէ ատ երգերէն փափագողներ կան , հաճին գիտնել վարչը նշանակուած հասցէին՝ վճարելով «մէկ թուղթին» համար 20 սանթիմ . փոստի ծախսը մեր վրայ , կան երգեր որոնք մէկէ աւելի թուղթերէ կը բաղկանան :

Ֆիլիպէ վարչ . «Հայկ. երգեցիկ խումբի»
Հասցէ՝ Agop Sivadjian Philippopie

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

—(11)—

«ՎԵՍԵԼՈ՞»

Հայ Դեր. խումբը առաջնորդութեամբ Ա. Պէնլեւնի վաղը հինգշաբթի գիշեր մեծաւ պատրաստութեամբ պիտի ներկայացնէ

Ըստ ինդրանաց թատերասէր ազգայնոց :

ԲԱՐԻՁԻ ՀՆԱՎԱՃԱՍՈՐ

Թատերախաղ 6 արար :
Նոր եկող իտալական երգեցիկ խումբին կ'ըմանէ երգեր և պարեր :

Խիստ ծիծաղաշարժ
զաւեշտ 1 արար

ԿԱՂԱՆԴՉԻՔ

Նոր լոյս տեսաւ այս գրկոյքը արձակ և ոտոնաւոր :

Հեղինակը զայն գրչի ցրօսանք անուանած է , և իրաւ ալ գրչի ցրօսանք է :

Գրին է 40 սնթ . կը ծախուի Վարնայի մէջ Չարպհանէլեան գրատունը :


ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լիզուէ այցետոմս , հասցէտոմս , նամակագրութիւն , հարսանեկան հրաւիրագիր , մահազգ :

Գիները յոյժ դիւրամատչելի :
Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

ՅԱՆՁՆԱԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻԿ

Մ . Ե Ր Ա Ն Ո Ս Ե Ա Ն



Կոշիակարի խանութ Չար Պորիս փողոց աղջիակց վար ժաւանիկ կից

ցիւր պատրաստուին եւ կը գտնուին պատրաստ ամէնտեսակ եւրոպական ճաշակաւ կօշիկներ էրիկ մարդու կանանց եւ տղայոց համար . ապրանք զիմացկուն , գիններ խիստ չափաւոր : Առաջին զիմողը արդէն պիտի համոզուի :

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ . ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ . Ուս . Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ զիմում ընելու համար պէտք է գիտնել հետեւեալ հասցէով
Իւնիոն Տե Զ'իյիսիսիս Արմ .
Լ'իօրթ քիւ ռը Լ'իօլ ռը Շիլի 2

Սուխա Ժընէվ
Կարգադիր Յաննաժողով

ԱԶԳ

Բաղէշի կուսակալութեան պատկանեալ Յուրգափ գիւղէն Պէկօ Ասատուրեանի , հասարակազմ շէկ պէխով ու յօնքերով , 6 ամիսէն ի վեր ուր լինելն անյայտ է զայն եթէ ճանաչողներ կան յանուն մարդասիրութեան թող իր այրի տիկին մայրը մխիթարել հաճին , անոր ուր գտնուիլը խմբագրութեանս հաղորդելով :

Отговорникъ:
Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна